



ԵՐԵՔ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԺԸ. ԴԱՐԱԿԷՍԻ, ՎԱՆԻ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊՂՆՁԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ¹

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
adakessian@haigazian.edu.lb

ՄՈՒՏՔ

Այս յօդուածով քննարկման նիւթ կը դարձնենք Երեք դիտարկումներ, որոնք կը վերաբերին հայկական պղինձին եւ կ'առնչուին.- 1) ԺԸ. դարու հայ պղնձագործութեան մրցունակութեան, 2) հայկական պղնձեայ դրոյներու որոշ տեսակի մը (փոքր եւ միջին չափի կաթնադրոյներու) Վանի պղնձագործական արտադրութեան եւ 3) Երուսաղէմի մէջ հայ պղնձագործութեան գոյութեան:

Նկատի առնելով որ առկայ եւա-

կէտային նմուշները սահմանափակ են, մեր եզրակացութիւնները կարիքն ունին յաւելեալ ապացոյցներու, նոր յայտնաբերումներու, որոնք կրնան յառաջանալ տարբեր կամ յաւելեալ նմուշներու հանրայնացումով, ինչպէս նաեւ այլ գրաւոր կամ փաստագրական նիւթերու ի յայտ գալով:

Ա. դիտարկում.-

ՀԱՅ ՊՂՆՁԱԳՈՐԾՆԵՐ ԳԵՐԱԶԱՆՅ ԱՐՀԵՍՏԱԻՈՐՆԵՐ ԷԻՆ ԺԸ. ԴԱՐԱԿԷՍԻ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Որոշ վերապահութեամբ այս հետեւութիւնը կատարեցինք, երբ 14 Մարտ 2023ին, դիմատետրի էջին վրայ հանդիպեցանք Հիլմիա Հիլմիի տե-

¹ Իբրեւ զեկոյց ներկայացուած Սարդարապատի ազգագրութեան թանգարանի կազմակերպած «Հայ մշակոյթի, ինքնութեան հարցեր» վերնագրեալ գիտաժողովին, 13 Մայիս 2023ին:

ղադրած պղնձեայ ամանի մը երեք նկարներուն.- 1) պղնձեայ ամանը, 2) անոր հայերէն կնիքը, 3) արաբատառ արձանագրութիւնը եւ թուականը²:

Յատկանշական է այս պնակը այն իրողութեամբ, որ մեզի անձանօթ են հայատառ կնիքով եւ ոչ-հայու սեփականութիւն ըլլալու արաբատառ արձանագրութիւնը կրող նման պնակներ՝ ԺԸ. դարակէսէն:

Հայերէն կնիք-ստորագրութիւնը ընդամէնը երկու գլխագիր տառեր ունի՝ Ա եւ Գ: Այս տառերը ազուցուած են իրարու այն աստիճան որ Գ տառին գլխիկը մխրճուած է Աի երկու սիւներուն միջեւ, մինչ Գ տառին ոտքը նոյնացած է Ա տառին երկրորդ ուղղահայեաց սիւնին եւ միայն Գ տառին դուրս գցուած պոչիկը կ'երեւի Աէն դուրս: Այս երկու տառերը տեղաւորուած են կլոր հարթակի մը վրայ, ուստի եւ կնքուելու պարագային կը գոյանայ կլոր շրջանակի մը մէջ դուրս գցուած վերոյիշեալ երկու տառը: Որոշ է, որ հայ արհեստաւորը հպարտ է իր արտադրութեամբ եւ չի ջանար պարտկել իր հայկական ինքնութիւնը: Ասիկա կ'եզրակացնենք որովհետեւ հայ արհեստաւորը իր վերոյիշեալ ազուցուած ԱԳ միացեալ կնիքով բազմաթիւ (շուրջ տաս) անգամներ դրոշմած է իր արտադրած այս պնակին արտաքին յատակին կեդրոնական բաժինը՝ կլոր շրջանակ մը յառաջացնելով այդ կնիքներուն շուրջ:

Պնակը ունի արաբատառ հետեւեալ արձանագրութիւնը՝

صاحبه اسماعيل بن سيد قوميش 1155

Այսինքն՝ իր տէրը՝ Իսմայիլ պըն Սէյիտ Քոմիշ, 1155 (=1742-43):

Թուականէն մեկնելով անվարան կը հաստատուի թէ գործ ունինք 1740ականներուն պատրաստուած պղնձեայ հայագործ պնակի մը հետ: Դժբախտաբար արձանագրութիւնները ոչինչ կ'ըսեն արհեստանոցին կամ պնակատիրոջ գտնուած վայրին մասին: Այդուհանդերձ, այս պնակը հաստատ ապացոյց է որ ԺԸ. դարակէսին ոչ-հայեր (այս պարագային Իսմայիլ պըն Սէյիտ Քոմիշը) պղնձեայ իրեր կը գնէին հայ պղնձագործներէ:

Հարց է, թէ ինչո՞ւ մահմետական այս Իսմայիլը կատարած է այսպիսի գնում մը, նախընտրելով հայու կամ հայկական պղնձեայ արտադրութիւնը: Տրամաբանութեան չի համընկնիր մտածել թէ Իսմայիլ բռնութեամբ (հետեւաբար ծրի) տիրացած է 'իր' պնակին: Որովհետեւ այդ պարագային դժուար է բացատրել թէ ինչո՞ւ ան պահպանած է հայկական կնիքները, որոնցմէ ուրեւ մէկը չի կրեր հետքերը խաթարման կամ եղծումի:

² Այս յօդուածին մաս չի կազմեր ամանին կեդրոնական գծանկարին քննարկումը, որ շատ կը նմանի մեր ունեցած Ուրֆայի հայ պղնձագործ Յակոբ Մանէրեանի ափսէին (տե՛ս՝ Անդրանիկ Տազեսեան, «Յեղասպանութեան զոհ՝ Ուրֆայի պղնձագործութիւնը եւ արհեստագէտ Յակոբ Մանէրեան», ՀՀՀ, 35:2015, էջ 375-98):



Հայերէն դրոշնուած եւ արաբատառ արձանագրութիւն ունեցող պնակը



Պնակին արաբատառ արձանագրութիւնը

Միքանի ենթադրութիւններ կարելի է ընել.-

ա) ոչ-հայերը (այս պարագային մահմետական Իսմայիլը) նախընտրած է հայկական արտադրութիւնը իր որակին, գինին, կամ աղուորութեան պատճառով: Ուստի եւ կրնանք հետեւցնել թէ հայկական արտադրութիւնը աւելի մրցունակ էր քան ոչ-հայուն (թերեւս մահմետական կամ յոյն պղնձագործին՝ նայած թէ ու՛ր կ'ապրէին անոնք) արտադրութիւնը:

բ) չկային ոչ-քրիստոնէայ պղնձագործներ: Ասիկա արդեօ՞ք կերթոյլատրէ հետեւցնել, թէ ոչ-քրիստոնէայ պղնձագործները, որոնց կը հանդիպինք ԺԹ. դարու Օսմանեան կայսրութեան Փոքր Ասիոյ տարածքին,

նոր մտած էին արհեստին մէջ, թերեւս ԺԸ. դարակէսին սորվիլ սկսելով հայ, յոյն, կամ հրեայ պղնձագործներէն³:

Մեր դիտարկումը կը նկատենք իրաւացի վարկած, որ սակայն հիմնուած է մէկ ցուցանմուշի վրայ: Այս վարկածը, կրնայ չեղարկուիլ, եթէ կարելի ըլլայ ի յայտ բերել նոյն շրջանի պղնձեայ այլ կամ նման իր մը, ուր արձանագրութիւններուն եւ կնիքին տէրերը հակառակն են: Միւս կողմէ, սակայն, կրնայ մեր այս վարկածը ամրապնդուիլ՝ եթէ ի յայտ բերուի այլ պղնձեայ իրեղէն մը, մեր բնօրինակին նման, թէկուզեւ տարբեր հայ արհեստատորի կնիքով:



Պնակին հայատառ դրոշմը

Բ. դիպարկում.-

ՈՐՈՇ ՏԱՌԱԴՐՈՇՄՈՎ ՎԱՆԻ ԿԱԹՆԱԴՈՅԼԵՐ

Պէյրուֆի հնավաճառներու մօտ, նաեւ հնութեան ու ժողովրդային շուկաներու մէջ երբեմն տակաւին կարելի կ'ըլլայ հանդիպիլ պղնձեայ կաթնադոյլերու, որոնց մէկ կամ երկու ականջակալներուն դրոշմուած⁴ ըլլայ հայերէն իսկ գլխագիր միակ տառ մը՝ **Ա, Ե, Թ, Մ**, կամ **Ո**: Երբեմն այս տառերը

³ Մեր երկրորդ դիտարկումը նուազ հաւանական կը թուի, որովհետեւ կան ուսումնասիրութիւններ, ուր խօսք կ'ըլլայ ԺԶ.-ԺԷ. դարերու Փոքր Ասիոյ իսլամ, յոյն, հրեայ եւ հայ պղնձագործներու մասին (տե՛ս օրինակ՝ Suraiya Faroqhi, *Crafts and the Craftspeople under the Ottomans*, London-New York, I.B.Tauris, 2012):

⁴ Կը գործածենք «դրոշմուած» եզրը, որովհետեւ ասոնք չի թուիր որ ձեռամբ փորագրուած արձանագրութիւններ ըլլան, այլ ականջակալներուն արհեստագիտական բժախնդրութեամբ տպուած-դրոշմուած տառեր են:

դրոշմուած են գլխիվայր: Տարբեր մեծութեամբ այս դոյլերը բացառապէս կարմիր պղինձէ պատրաստուած են: Հանդիպեցանք երկու բացառութեան՝ դեղին փոքրաչափ նմուշներու, մին Երեւանի Լուսիկ Ագուլեցիի տուն-թանգարանին մէջ⁵, միւսը օրերս ձեռք ձգեցինք Պէյրութի հնութիւններու շուկայէն⁶: Հանդիպած ենք վերոյիշեալ ականջակալներուն դրոշմուած հայերէն միակ գլխատառի շատ յաճախ մաքուր, երբեմն ալ մաշած (բայց ոչ խաթարուած) նմուշներու:

Հայերէն այս տառերուն ներկայութիւնը անտեղիտալի ապացոյց է, որ ասոնք արտադրուած են հայ արհեստանոցներու մէջ: Դժբախտաբար, ընդհանրապէս պղնձեայ իրերու բացարձակ մեծամասնութիւնը ոչ մէկ արձանագրութիւն ունի. փոքրաթիւ են այն պղնձեղէնները որոնց վրայ կան պատկանողին անունը, կամ թուական մը: Առաւել հազուադէպ են պատրաստող արհեստատրին կամ արհեստանոցին անունը կրող պղնձեայ կաթնադոյլերը:

Մեր երկարատեւ որոնումները կաթնադոյլերու այս տեսակի ծագումին վայրին մասին՝ ապարդիւն անցան, մինչեւ որ Հայաստանի Հանրապետութեան մէջ, հաւաքողներ տէր եւ տիկ. Նարեկ եւ Արմինէ Դաւթեաններու հաւաքածոյին մէջ գտանք միակ օրինակ մը⁷:

Հաւաքածոյին այս կաթնադոյլը կափարիչ ալ ունի, ուր դրոշմուած է «ՎԱՆ 1874» արձանագրութիւնը: Նոյն այս արձանագրութիւնը դրոշմուած է նաեւ կաթնադոյլին բռնակին (կոթին) վրայ: Դեռ աւելին, կաթնադոյլին երկու ականջակալներուն վրայ դրոշմուած է **Մ** տառը:

Կը կարծենք, ասիկա անտեղիտալի ապացոյց է որ այս դոյլը արտադրուած է Վանի մէջ, 1874ին, տեղի արհեստանոցներէն մէկուն մէջ:

Կարելի է հետեւցնել թերեւս, որ ականջակալներու վրայ դրոշմուած տարբեր գլխագիրերը կը համապատասխանէին Վանի պղնձագործութեան տարբեր արհեստատրներու/արհեստանոցներու անուններուն:

Մատնանշել պէտք է նաեւ այն, որ գլխագրով դրոշմուած այս ականջակալները ընդհանրական նմանութիւններ ունենալով հանդերձ, կը տարբերին իրենց մանրամասնութեանց մէջ. ոմանք աւելի ոճատրուած են, որիշներ ունին ձեւի կամ հարթ տարածութեան մշակման տարբերութիւններ (տե՛ս՝ համապատասխան նկարները):

⁵ Թանգարան մեր այցելութեան (6 Մարտ 2023), մենք հանդիպեցանք այս կաթնադոյլին, որ ունէր 10 սմ հասակ, 11 սմ տրամագիծ եւ կը կշռէր 260 կրամ: Անոր ականջակալին դրոշմուած էր **Մ** տառը:

⁶ Մեր ձեռք բերած կաթնադոյլը շատ նման է Ագուլեցիի ցուցանմուշին, դրոշմուած ունի նաեւ նոյն՝ **Մ** տառը:

⁷ Այս նմուշին հանդիպած էինք Յունիս 2022ին: Սակայն Մարտ 2023ին էր որ առիթն ունեցանք աւելի մօտէն քննելու զայն եւ ամօլին արտօնութեամբ օգտագործելու այս փաստը:



Կաթնադուլյին կափարիչին դրոշմը՝ «ՎԱՆ 1874» եւ ականջակալին Մ տառը



Նարեկ եւ Արմինէ Դաթեաններու հաաքածոյէն այլ նմուշ մը,
որ կ'երեւի «Վան» դրոշմը

Մեր այս դիտարկումը առիթ կու տայ ենթադրել-հետեւցնելու թէ դոյլերու ականջակալներուն հայերէն միակ գլխագիր տառով դրոշմուած նման կաթնադոյլերը շատ հաւանաբար պատրաստուած ըլլան Վանի մէջ:

Մեր այս վարկածը կարիքն ունի յաւելեալ փաստարկներու, այլ խօսքով՝ յայտնաբերելի նմուշներու, որոնք ունին Վան տեղավայրի արձանագրութիւնը, որով կարելի ըլլայ ամրապնդել այս վարկածը: Կրնանք ակնկալել նաեւ, որ Արեւմտեան Հայաստանի այլ տեղավայրերու անունով դրոշմուած կաթնադոյլեր եւս կրնան յայտնաբերուիլ: Մինչեւ այդ, սակայն, որոշ փաստացիութեամբ ամրացուած ենթադրութիւն կը մնայ մեր այս վարկածը:

Գ. դիտարկում.-

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ ԳՈՐԾԱԾ ԵՆ ՀԱՅ ՊՂՆՁԱԳՈՐԾՆԵՐ

Այս հարցադրումը կատարեցինք, երբ ի ձեռի ունեցանք պղնձեայ հինգ նոյնանման փոքրաչափ ամաններ, որոնք կը կրեն նոյն արձանագրութիւնը պնակին կոնակին՝ ՄՂՏՍԻ ՂՈՒԿԱՍ: Հինգ ամաններուն արձանագրութիւններուն մէջ **Ս** եւ **Ի** տառերը ագուցուած են (**ՍԻ**): Իսկ հինգ ամաններէն չորսին պարագային **Ո** եւ **Ի** տառերը եւս ագուցուած են (**ՈԻ**):

Այս պնակները կը կշռեն 1173, 226, 232, 251 եւ 278 կրամ: Անոնց արտաքին տրամագիծը կը տարուբերի 16 եւ 17,5սմ.ի միջեւ, իսկ մետաղին հաստութիւնը՝ 0,8 եւ 1,5 մլմի միջեւ:

Հարց է, թէ ինչո՞ւ ուխտաւոր Ղուկասը իր ծննդավայրէն Երուսաղէմ պիտի բերէր 5 (կամ աւելի) ամաններ եւ ետ տանէր իրեն հետ: Յիրաւի, ան այս պնակները ետ տարած է, այլապէս պնակները պէտք էր արձանագրէին թէ կը նուիրաբերուին Երուսաղէմի (ըսենք՝ «Յիշատակ է ի դուռն Ս Յակոբայ» եւն.) Ս. Յակոբայ վանքին, մանաւանդ որ նման նուիրաբերման արձանագրութեանց յաճախ կը հանդիպինք պնակներու վրայ:

Մեր ենթադրութիւնը հետեւեալն է.-

ա) Ուխտաւոր Յակոբը այս հինգ պնակները իր հետ բերած է իր ծննդավայրէն (կամ զանոնք գնած է ուխտագնացութեան ճանապարհին) եւ անոնց օրհնումէն առաջ կամ ետք պատուիրած սաղեմաբնակ պղնձագործի մը, որ փորագրէ իր անունը, եւ կամ՝

բ) Ուխտաւոր Յակոբը այս հինգ պնակները (թերեւս ալ ուրիշներ) պատուիրած եւ գնած է Երուսաղէմի մէջ, հայ պղնձագործէ մը, կամ ալ սաղեմաբնակ հայ պղնձագործներէ՝ իր ուխտը իրագործելէ ետք:

Մեր երկրորդ ենթադրութիւնը աւելի տրամաբանական կը հնչէ: Արդարեւ, մինչեւ այսօր տակաւին Երուսաղէմ այցելող հայ ուխտաւորներ կրնան իրենց թելը, կամ մարմնի այլ մաս մը դաջել՝ ի յիշատակ իրենց ուխտագնացութեան: Ուրիշ հայ ուխտաւորներ այլ ձեւով կը ջանան 'յաւերժացնել' յիշարժան իրենց ուխտագնացութիւնը, գնելով (կամ յատուկ պատուիրելով) տեղի հայ խեցեգործներէն գաւաթ մը, կամ որեւէ այլ խեցեղէն: Ինչպէս

գիտենք, այսօր, տակալին կան հայ խեցեգործներ Երուսաղեմի մէջ⁸: Մեր երկրորդ ենթադրութիւնը կը հաստատուի նաեւ այն փաստով որ այս հինգ պնակներուն չափագրութիւնները այնքան մը կը տարբերին իրարմէ, որ դժուար թէ ուխտաւոր Յակոբը զանոնք գնած ըլլայ Երուսաղեմի մէջ, հայ տարբեր պղնձագործներէ: Այս պնակներուն տարբեր հայ պղնձագործներէ գնուած ըլլալը, կը հաստատուի նաեւ պնակներուն աշխատելաճոհի նկատառելի տարբերութիւններով:

Արդ, կարելի է վիճարկել. եթէ հայ ուխտաւորներ Երուսաղեմի հայ խեցեգործներէն կրնային եւ կրնան տակալին պատուիրել ու գնել իրենց ուխտագնացութիւնը յիշատակող, անձնականացած (կամ չանձնականացած) խեցեղէն մը, ինչու՞ անհնար պիտի ըլլար խեցեղէնի փոխարէն պղնձեղէն պատուիրել եւ գնել զայն Երուսաղեմի մէջ:

Մենք շատ հաւանական կը նկատենք որ Երուսաղեմի մէջ գործած ըլլան հայ պղնձագործներ, որոնք ուխտաւորներուն համար պղնձեղէն արտադրէին: Այդ պղնձեղէնը կրնար նախապէս պատրաստուած եւ ցուցադրուած ըլլալ արհեստանոցին մէջ, պատուիրատուն կրնար ընտրել չափը ամանին կամ իրին, պատուիրել արձանագրութիւնը եւ աւելի ետք ստանձնել իր պատուէրը: Բնական պիտի ըլլար որ նուազ քան 10,000 մնայուն բնակչութիւն ունեցող օսմանեան Երուսաղեմի մէջ, ուր դարաւոր ներկայութիւն էին հայ ուխտաւորները եւ ուր, օսմանեան շրջանին կը գործէին 45 համքարութիւններ (որոնց շարքին աւելի քան մէկ հաւտ՝ պղնձագործներու), հայ պղնձագործներու համքարութիւն չգտնուէր⁹:

Եթէ հաստատուի շատ հաւանական թուացող այս փաստը, ապա կարելի է Երուսաղեմի հայ պղնձագործները դնել հայոց պատմական բնօրրանէն եւ Փոքր Ասիոյ տարածքէն դուրս գործած (Հալէպի, Պէյրութի, թերեւս նաեւ ուշ միջնադարու Արեւելեան Եւրոպայի հայկական գաղութներու մէջ գործած հայ պղնձագործ արհեստաւորներու դաշտին մէջ:

Բայց եւ այնպէս, սաղիմաբնակ խեցեգործ Յակոբ Անդրէասեան¹⁰ չկրցաւ հաստատել հայ պղնձագործներու գոյութիւնը Երուսաղեմի մէջ: Հաւանաբար անոնք արդէն անհետացած էին իր մանկութեան, գուցէ եւ աւելի առաջ: Անդրէասեանի դրական հաւաստումը կրնար առաւել ամրապնդել մեր ենթադրութիւնը: Սաղիմաբնակ ուրիշ բարեկամի մը եւս դիմեցինք, որ անանունութեան պայմանով վերահաստատեց Անդրէասեանի ըսածը, աւելցնելով թէ սաղիմաբնակ մեծահասակներ եւս չեն յիշեր հայ պղնձագործներու գոյութիւնը Երուսաղեմի մէջ, բայց կը յիշեն սաղիմաբնակ հայ

⁸ Օրինակի համար նշանաւոր Պալեանները, Յակոբ Անդրէասեան եւն.:

⁹ Suraiya Faroqhi, *Crafts and the Craftspeople under the Ottomans under the Ottomans*, I.B. Tauris, London-New York, I.B.Tauris, 2012, էջ 180-81:

¹⁰ Հաղորդակցութիւն 17 Մարտ 2023:

կլայագործներ¹¹: Իդէա, չենք հանդիպած նոյնանման այսպիսի պնակներու այլ խմբաքանակի, որ առաւել ամրապնդէր մեր ենթադրութիւնը: Չենք հանդիպած նաեւ Երուսաղէմի հայ արհեստանոցի կնիքի, որ կրնար արդէն իսկ աւելորդ դարձնել մեր այս հարցադրումը:



Սաղիմաբնակ Պալեաններու արտադրութեան խոհանոցի պատի սալիկներ

Միւս կողմէ, սակայն ի պատասխան մեր այս յօդուածին, Յակոբ Չոլաքեան, իր 25 Նոյեմբեր 2023 թուակիր ելմակին մէջ կը գրէ. *«Իմ լսածներու համաձայն շատ ուխտաւորներ Երուսաղէմէն իրենց հետ յուշանուէրներ կը բերէին: Ասոնց մէջ կ'ըլլային պղնձեայ պնակներ, արձանագրութեամբ: Կ'ըսուի որ պնակները 12 հատ կ'ըլլային»*:

Կարելի է միայն հետեցնել, որ շուկայի մրցակցութեան չդիմանալով, հայկական պղինձի Երուսաղէմի արտադրութիւնները տեղի տուած ըլլան այլատեսակ (ալիւմին, կերպընկալ, խեցեղէն եւն.) արտադրութիւններու: Թերեւս, վերոյիշեալ կլայագործները վերջին մոհիկաններն էին սաղիմաբնակ հայ պղնձագործներուն:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ամփոփելով՝ մեր այս քննարկումով, մենք հաւանական կը գտնենք, որ.-
 ա) ԺԸ. դարուն հայկական պղինձը կը գերազանցէր Փոքր Ասիոյ ոչ-հայ, մանաւանդ մահմետական պղնձագործներու արտադրութիւնը,
 բ) Կաթնադոյլեր, որոնց ականջակալներուն արձանագրուած են հայկական **Ա, Ե, Թ, Մ**, կամ **Ո** գլխաւորելէն որեւէ մին, Վանի հայ պղնձագործներու արտադրութիւններ են.
 գ) Երուսաղէմի մէջ ապրած եւ գործած են հայ պղնձագործներ, թերեւս մինչեւ Ի. դարասկիզբ:

¹¹ Հաղորդակցութիւն 18 Մարտ 2023:



Պղնձեայ հինգ նոյնանման փոքրաչափ ամանները, որոնք կը կրեն նոյն
արձանագրութիւնը պնակին կոնակին՝ ՄՂՏՍԻ ՂՈՒԿԱՍ

THREE OBSERVATIONS ON
MID-18TH CENTURY, VAN, AND JERUSALEM ARMENIAN COPPERSMITHS
(SUMMARY)

ANTRANIK DAKESSIAN

adakessian@haigazian.edu.lb

Based on unique, single samples, the article infers that a) 18th century Armenian coppersmiths of Asia Minor were competitive in the market to the extent that even Muslims would prefer to buy their handmade plates, b) a certain type of Armenian bucket which had an Armenian capital letter imprinted on the ears of the handles was produced in Van, and c) most probably Jerusalem had a number of Armenian coppersmiths who lived and produced in that pilgrims' city until perhaps the mid-20th century.